

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետ (տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը) պահանջի վերաբերյալ

ՀՀ առողջապահության նախարարությունը տնօրինում է ՀՀ առողջապահության ոլորտին, առողջապահության նախարարության գործունեությանը, աշխատակազմին, աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների, ինչպես նաև մարզային ենթակայությամբ գործող առողջապահական կազմակերպությունների առողջապահության ոլորտում ծավալած գործունեությանը վերաբերող տեղեկություններին: Նշված տեղեկությունները մշակվում են ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից և պահպանվում համապատասխան փաստաթղթերում և “Mulberry” համակարգում: Հրապարակման ենթակա տեղեկությունները տեղադրվում են նաև ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական (www.moh.am) կայքում: